ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՎԻԵՆՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արարատ Սահակյան, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա), 2023թ. մայիսի 29-ից 31-ը:

3. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի բաց տիեզերքի հարցերով գրասենյակ (UNOOSA):

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն բաց տիեզերք արձակված օբյեկտների գրանցման վերաբերյալ փորձագիտական քննարկումներին:

5. Քննարկված թեմաները.

Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի տիեզերական բնագավառի հինգ համաձայնագրերի (treaties), որոնք գլխավորապես ուղղված են տիեզերքի խաղաղ օգագործման ապահովմանը: Այս համատեքստում ՄԱԿ-ի կողմից առանձնակի կարևորություն է տրվում տիեզերք արձակված օբյեկտների գրանցման հարցերին:

Ս.թ. մայիսի 29-ից 30-ը կազմակերպված միջոցառման ընթացքում շուրջ 70 երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ պանելային քննարկումների և խմբային աշխատանքների ձևաչափով կիսվել են տիեզերական օբյեկտների գրանցման առկա մարտահրավերներով և սեփական փորձով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ս.թ. մայիսի 31-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի պետ Արարատ Սահակյանը և Վիեննայում ՄԱԿ-ի գրասենյակում և այլ միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության խորհրդական Էլեն Հարությունյանը հանդիպում են ունեցել ՄԱԿ-ի բաց տիեզերքի հարցերով գրասենյակի ղեկավարի ծրագրերի կառավարման պատասխանատու Ն. Ֆ. Ռոդրիգեսի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ ոլորտային ազգային օրենսդրության առանձնահատկությունները, ինչպես նաև ՄԱԿ-ի գրասենյակի կողմից հնարավոր աջակցությունը տիեզերական բնագավառում իրենց առաջին քայլերն անող երկրներին ազգային օրենսդրության ստեղծման և շարունակական բարելավման գործում:

Նույն օրը հանդիպում է տեղի ունեցել նաև Տիեզերական տեխնոլոգիաների կիրառման բաժնի ղեկավար Լ. Ս. Պիերի հետ, որի ընթացքում քննարկվել է ՄԱԿ-ի կողմից աջակցության ծրագրերը, որոնք գլխավորապես զարգացող երկրներին տիեզերական ժամանակակից ենթակառուցվածքների որոշակի հասանելիության հնարավորություն են տալիս:

Հանդիպում է տեղի ունեցել նաև «Space Law for New Space Actors» ծրագրի ղեկավար Ռ. Հոֆմանի հետ, որի ընթացքում քննարկվել է ՀՀ տիեզերական բնագավառի օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխման համար հնարավոր աջակցության հնարավորությունները: Եվրոպական տիեզերական քաղաքականության ինստիտուտի կողմից կազմակերպված միջոցառման ժամանակ քննարկվել է ՄԱԿ-ի տիեզերքի խաղաղ օգտագործման կոմիտեյի և ՄԱԿ-ի միջազգային հեռահաղորդակցության միության փոխգործակցության առանձնահատկությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում տեղի են ունեցել նաև խմբային քննարկումներ, որի ժամանակ ներկայացվել են ՀՀ օրենսդրության առանձնահատկությունները, վեր են հանվել արտերկրյա մասնավոր ընկերությունների կողմից կիրառվող տարբեր բիզնես մոդելների կիրառման արդյունքում ի հայտ եկող օրենսդրական խնդիրներն, տրվել են ոլորտային որոշ անկյունաքարային սահմանումների տարբեր մեկնաբանություններ: Խմբային քննարկումների

արդյունքում ՄԱԿ-ի տիեզերքի խաղաղ օգտագործման կոմիտեին զարգացող երկրների կողմից տիեզերական օբյեկտների գրանցման գործընթացի և տիեզերական բնագավառի օրենսդրության շարունակական բարելավմանն ուղղված առաջարկներ են արվել:

«Access to Space For All» ծրագրի շրջանակում քննարկվել են մրցութային 9 ծրագրերի առանձնահատկությունները, ինչպես նաև դիմումների ներկայացման և ընտրության տեխնիկական մանրամասները:

«Space Law for New Space Actors» ծրագրի շրջանակում քննարկվել է միջազգային փորձագիտական խումբ ստեղծելու, գործող օրենսդրությունն ու հնարավոր բարեփոխման առաջարկություններն ուսումնասիելու և մասնագիտական առաջարկություններ տալու հնարավորությունը:

Քննարկվել են նաև «Արմսաթ-1» արբանյակի ՄԱԿ-ում գրանցման գործընթացի տեխնիկական մանրամասները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում, ծանոթանալով շուրջ 30 երկրների փորձին և քննարկումներ ունենալով տիեզերական օբյեկտների գրանցմամբ զբաղվող արտերկրյա մասնագետների հետ, նախանշվել են ՀՀ ոլորտային օրենսդրության բարելավմանն ուղղված որոշ քայլեր:

Տիեզերական օբյեկտների գրանցմամբ զբաղվող ՄԱԿ-ի մասնագետների հետ մանրամասն քննարկվել են «Արմսաթ-1» արբանյակի ՄԱԿ-ում գրանցման փաստաթղթերի տեխնիկական առանձնահատկությունները:

«Access to Space For All» ծրագրի ներքո գործող մրցույթների վերաբերյալ նշվել է, որ ընթացիկ տարվա մրցույթները շուտով կհրապարակվեն: Մրցույթների հետ կապված հետագա տեխնիկական հարցերի դեպքում հնարավորություն կլինի կենտրոնացված կերպով խորհրդակցություններ իրականացնել ծրագրի համակարգող մասնագետների հետ:

«Space Law for New Space Actors» ծրագրի շրջանակում պայմանավորվածություն է ձեռքբերվել ուսումնասիրել ծրագրի ֆինանսավորման/համաֆինանսավորման համար դոնոր գտնելու հնարավորությունները:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արարատ Սահակյան

Միջազգային համագործակցության վարչություն
05.06.2023թ.